

Թիւ 26456
Յուլիս 9, 1979

Նորին Սուլք Օծութիւն
Տէր Տէր Վազգէն Սոաչին
Մրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուլք Էջմիածին։

Վեհապետ Տէր,

Գարիցի մէջ Զերդ Սրբութեան հետ տեսակցելէ յետոյ, Թե-
մական Խորհուրդի Յուլիս 15ի նիստին մէջ կրկին անդրադար-
ձանք Վեհիդ 1979 Մարտ 12 եւ Սպրիլ 6 թուակիր նամակներուն։

Խոյն զիրով կը փափաքինք յայտնել Զերդ Սրբութեան թէ-
թեմական Խորհուրդը իրազեկ է Վեհիդ բաղմանքին Դանաւան ան-
ջաւ թեմի վերածելու եւ Թորոնթոյի մէջ երկրորդ ծուփի մը
կազմուիլը հաստատելու։

Այս ծրագիրներու իրազործման համար Թեմական Խորհուրդը
պարզաւոր է նկատի առնել Գանատայի հաւատացեալներուն մէջ
յառաջացած ներքին հակամարտ զգացումները, ստեղծուած տարբեր
խմբակցութեանց միջեւ զոյութիւն ունեցող վէճերը եւ անհա-
մաժայնութիւնները, եւ նիւթական պարտաւորութիւնները որոնց
պէտք ենթարկուին անջաւ թեմի մը ստեղծումով։

Ներկայիս շենք կրիչեր որ անջաւ թեմի մը ստեղծումը կըր-
նայ իրականանալ առանց յաւելեալ խոռվութեանց, որոնց հետե-
ւանքով պառակտուած պիտի մնան Գանատայի մեր գաւակները։

Օրինաւոր եւ կարգապահ ոգիով իրականացնելու համար վերո-
յիշեալ նպատակները, մենք պէտք ունինք Զերդ Սրբութեան եւս
վստահութեան, իմաստութեան եւ հեղինակութեան։

Անկասկած որ մեր ուշադրութեան առարկայ պիտի ըլլան Գանաւայի մեր հաւատացեալներէն նկած թելաղրութիւնները, բայց մեր որոշումները Գանաւայի հարցին մէջ պիտի շառնուին նընշումներու ներքեւ որեւէ մասնաւոր էումբի մը եւ կամ հրատակուած գրութիւններու:

Ներկայիս, մեր եւ թեմական Խորհուրդի կարծիքն է որ վերջնական իրազորձումը անջատ թեմի մը կազմութեան աւելի ժամանակ սպառող հարց մըն է, եւ ենթակայ պիտի ըլլայ ոմանց բահալերութեան եւ այլոց ընդդիմութեան, ինչպէս արդէն իսկ այդ վերացերմունքը ցոյց տրուած է եւ այդ հակամարտ դիրքաւորումները ուժգնօրէն արտայայտուած են:

Մեր կարծիքով այս ուղղութեամբ որեւէ ուրիշ աշխատանք պէտք է կատարուի Առաջնորդին եւ թեմական Խորհուրդին հրահանգով միայն, զործակցութեամբը Գանաւայի մեր հաւատացեալներուն, եւ համածայն Գանաւական պետական օրէնքներուն:

Գանաւայի վերջին իրազրութիւնները նկատի առած, անհրաժեշտ է հաստատել եւ մեր ժողովուրդը դաստիարակել յարգելու Վեհիդ կողմէ վաւերացուած թեմական Կանոնազրութիւնը, ըստ որում Առաջնորդին եւ թեմական Խորհուրդին միայն իրաւասութիւն կը տրուի որոշումներ առնելու նոր համայնքներու եւ անջատ թեմի մը կազմութեան հարցերուն մէջ:

Ներկայ պարագային, թեմական Խորհուրդը պիտի որոշէ ժամանակը, միջոցառումները եւ պայմանները

1. Յաւելեալ համայնքներ կազմակերպելու Գանաւայի մէջ.
2. Կազմակերպելու եւ օրինական միջոցներով իրականացնելու հաստատումը անջատ թեմի մը Գանաւայի մէջ:

Զերդ Սրբութեան ներկայացնելով մեր եւ թեմական Խորհուրդի ժամանումները եւ յստակ ընելով մեր վերապահումները ստեղծուած կացութեան մասին, կը ինդրենք Զերդ Վեհափառութենէն որ արդիւնաւորելու համար առաջադրուած նպատակները եւ փարատելու համար որեւէ կասկած թեմական հշխանութեան իրաւասութեան մասին, առաջին առիթով հաղորդէք մեզի Վեհիդ խորհուրդը եւ հրահանգը:

Կապօթենք Զերդ Սրբութեան կենաց արեւշատութեան համար, եւ մատչիմք ի համբոյր Վեհիդ Օծեալ Աջոյն:

Խոնարհաբար

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
Առաջնորդ